**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<<20>> ապրիլի 2021թ.  ՆՄՈ/117-2021

ք. Արմավիր

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N751-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի NSU/ՔՀ-2-2/69279-2020 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության գործառույթներ իրականացնելու նպատակով.

*որոշում եմ՝*

1. Ստեղծել աշխատանքայի խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ.Հարությունյանին)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Արևածագ>> երեխաների աջակցության կենտրոնի սոցիալական աշխատող՝ Մարգարիտ Սեդրակյանին և <<Ընտանիք և համայնք>> բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական աշխատող՝ Սվետա Ավետիսյանին:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Գ.Հարությունյանին)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

***Մարզպետին փոխարինող,***
***մարզպետի տեղակալ՝*** ***Ա. Մեխակյան***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 20.04.2021 13:00:31 GMT+4

Подписано: MEKHAKYAN ARGISHTI 3208860013

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-42-62, Ֆաքս 0237/2-42-62, էլ. փոստ ՝ aghek.armavir@mta.gov.am

*Հավելված*

*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզպետ 2021թվականի*
*ապրիլի --- ի*
*ՆՄՈ/ -2021 որոշման*

**Կազմ**
**աշխատանքային խմբի**

*Աշխատանքային խմբի ղեկավար՝*

| | |
|---|---|
| Գայանե Հարությունյան | ՀՀ Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի պաշտոնակատար |

*Անդամներ՝*

| | |
|---|---|
| Աիդա Պողոսյան | ՀՀ Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ. |
| Նոննա Թամրազյան | ՀՀ Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ. |
| Ցողիկ Սարգսյան | ՀՀ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ: |

**Գլխավոր քարտուղար՝** **Ա. Հովհաննիսյան**